ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Վերին Պտղնի, 2-րդ փողոց թիվ 48,հեռ.060517670էլ.փոստ
verinptghni.kotayq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ
20 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ N 265

ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Ընտրական օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2021 թվականի հոկտեմբերի 15-ի N01/08.1 /06680-2021 գրությունը՝ **որոշում եմ.**

1. 2021 թվականի դեկտեմբերի 5-ին կայանալիք տեղական ինքնակառավարման մարմինների համամասնական ընտրությունների համար Վերին Պտղնի համայնքում տեղամասային կենտրոն սահմանել Վերին Պտղնի, 2-րդ փողոց, թիվ 1 հասցեում գտնվող միջնակարգ դպրոցի շենքը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Գ. ՊՈՂՈՍՅԱՆ**

2021 թ.հոկտեմբերի 20
գ.Վերին Պտղնի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Վերին Պտղնի, 2-րդ փողոց թիվ 48 , Հեռ.060517670 էլ.փոստ
verinptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
20 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ N 266

ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ՊԱՍՏԱՌ, ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ՏՊԱԳԻՐ ԵՎ ԱՅԼ ՆՅՈՒԹԵՐ ՓԱԿՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՎՃԱՐ ՏԵՂԵՐ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Ընտրական օրենսգրքի 21-րդ հոդվածի 3-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2021 թվականի հոկտեմբերի 15-ի N 01/08.1 /06680-2021 գրությունը՝ **որոշում եմ.**

1. 2021 թվականի դեկտեմբերի 5-ին կայանալիք տեղական ինքնակառավարման մարմինների համամասնական ընտրությունների համար քարոզչական պաստառ, տպագիր և այլ նյութեր փակցնելու համար առանձնացնել հետևյալ անվճար տեղերը՝ 1-ին փողոց թիվ 36-ի հարևանությամբ՝ 3 քմ, 2-րդ փողոց 1-ին նրբանցք թիվ 2՝ 2 քմ, 3-րդ փողոց թիվ 2՝ 3 քմ:

2. Սույն որոշման կատարման հսկողությունը դրվում է համայնքի ղեկավարի օգնականի վրա:

ՀԱՄԱՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Գ. ՊՈՂՈՍՅԱՆ**

2021 թ.հոկտեմբերի 20
գ.Վերին Պտղնի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Վերին Պտղնի, 2-րդ փողոց թիվ 48 , Հեռ.060517670 էլ.փոստ
verinptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
20 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ N 267

ԷԴՄՈՆԴ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ՓՈԽԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Վերին Պտղնի համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 56-Ա որոշումը, համայնքի բնակիչ Էդմոնդ Աբրահամյանի դիմումը՝ որոշում եմ.

Համայնքի 2021 թվականի բյուջեի «Բարձրագույն կրթություն» բաժին 09, խումբ 4, դաս 1 ծրագրի 4727 հոդվածից 60000 (վաթսուն հազար) ՀՀ դրամ փոխանցել Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ հիմնադրամի ուսանող Էդմոնդ Աբրահամյանի տարեկան ուսման վարձի մասնակի չափը վճարելու համար:

ՀԱՄԱՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ՊՈՂՈՍՅԱՆ

2021 թ.հոկտեմբերի 20
գ.Վերին Պտղնի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Վերին Պտղնի, 2-րդ փողոց թիվ 48 , Հեռ. 060517670 էլ. փոստ
verinptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
22 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ N 268

«ՄԱՐԻԱՆՆԱ ԴԱՎԹՅԱՆ» ԱՁ -ԻՆ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ԿԱՄ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՓՈԽԱՐԻՆԻՉՆԵՐԻ ԿԱՄ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՆՄԱՆԱԿՆԵՐԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Վերին Պտղնի համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 53-Ն որոշման պահանջներով ինչպես նաև հիմք ընդունելով «Մարիաննա Դավթյան» ԱՁ-ի կողմից ներկայացված հայտը՝ որոշում եմ

1. «Մարիաննա Դավթյան» ԱՁ-ին տրամադրել օրենքով սահմանված սահմանափակումներին համապատասխան ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվություն 2021 թվականի հոկտեմբերի 22-ից մինչև 2022 թվականի հունվարի 1-ը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ՊՈՂՈՍՅԱՆ

2021 թ.հոկտեմբերի 22
գ.Վերին Պտղնի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Վերին Պտղնի, 2-րդ փողոց թիվ 48,հեռ.060517670էլ փոստ
verinptghni.kotayq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ
25 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ N 269

ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի պահանջներով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 48-րդ կետերի պահանջներով՝ որոշում եմ.

1. Արամ Աբաջյանին սեփականություն հանդիսացող /կադաստրային ծածկագիր /07-062-0203-0077/ 0.01261 հա հողատարածքին տրամադրել հասցե՝ ՀՀ Կոտայքի մարզ, գ. Վերին Պտղնի, «Նորավան» թաղամաս 1-ին փողոց թիվ 52/1:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Գ. ՊՈՂՈՍՅԱՆ**

2021 թ. հոկտեմբերի 25

Գ. Վերին Պտղնի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Վերին Պտղնի, 2-րդ փողոց թիվ 48,հեռ.060517670էլ.փոստ
verinptghni.kotayq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ
26 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ N 270

ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի պահանջներով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 48-րդ կետերի պահանջներով՝ որոշում եմ.

1. Ռոբերտ Հարությունյանին համատեղ սեփականություն հանդիսացող /կադաստրային ծածկագիր /07-062-016-034/ 0.0850 հա հողատարածքին և շինություններին տրամադրել հասցե՝ ՀՀ Կոտայքի մարզ, գ. Վերին Պտղնի, «Նոր» թաղամաս 1-ին փողոց թիվ 37:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ՊՈՂՈՍՅԱՆ

2021 թ. հոկտեմբերի 26

Գ. Վերին Պտղնի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Վերին Պտղնի, 2-րդ փողոց թիվ 48 , Հեռ.060517670 էլ փոստ
verinptghni_kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
26 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2021ԹՎԱԿԱՆԻ N271

ԷԴԳԱՐ ԱԿՈՊՅԱՆԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով<<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի պահանջը, ինչպես նաև քաղ. Էդգար Ակոպյանի դիմումը՝ **որոշում եմ**

1. Էդգար Ակոպյանին տալ իրեն պատկանող բնակավայրերի նշանակության հողամասում բնակելի տան և պարիսպապատման շինարարական աշխատանքները սկսելու թույլտվություն :

2. Հանձնարարել Էդգար Ակոպյանին շինարարական աշխատանքներն իրականացնել համապատասխան քաղաքաշինական փաստաթղթերի համաձայն:

3. Շինարարական աշխատանքները սկսելուց հետո եռօրյա ժամկետում Վերին Պտղնի համայնքի համայնքապետարան ներկայացնել ձև N5 տեղեկանքը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ՊՈՂՈՍՅԱՆ

2021 թ.հոկտեմբերի 26
գ.Վերին Պտղնի